ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

11 փետրվարի Շաբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

20
(2686)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՓԱՇԻՆՅԱՆԻ ԹԻՄԱԿԻՑՆԵՐԸ ԽԱԲԵԼ ԵՆ. ՄԱՍ 11

Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Վահագն Ալեքսանյանը փետրվարի 7-ին Հանրային հեռուստաընկերությանը տված հարցազրույցում ասել է, թե առաջին անգամ իրենց իշխանության ժամանակ է, որ Ադրբեջանի միայն ռազմական բյուջեն ավելի չէ Հայաստանի ողջ պետական բյուջեից:

«Եթե մենք բանակին ավելի քիչ ուշադրություն դարձնեինք, փաստացի, մեր իշխանության գալով, համարյա չէինք կրկնապատկի ռազմական բյուջեն, առաջին անգամ ռազմական բյուջեն չէր հատի մեկ միլիարդի շեմը (դոլարային արտահայտությամբ- խմբ.), ու առաջին անգամ չէր լինի, որ, առհասարակ, Ադրբեջանի մենակ ռազմական բյուջեն մեր ամբողջ պետական բյուջեից մեծ չի»,- ասել է պատգամավոր Ալեքսանյանը: Սակայն «Սիվիլնեթ»-ի փաստերի ստուգման հարթակն ուսումնասիրել եւ պարզել է, որ այդ պնդումները սխալ են:

2022-ին ռազմական պաշտպանության ծախսերը փաստացի կազմել են 477,3 մլրդ դրամ (նախատեսվել էր 340,57 մլրդ դրամ) եւ այսպիսով, այդ թվում՝ դրամի արժեւորման շնորհիվ, հատել 1 մլրդ դոլարի շեմը:

Հարկ է նշել, որ ներառված չեն ԱԱԾ-ի սահմանապահ ծառայության եւ ռազմարդյունաբերության ծախսերը, իսկ 2023-ի ռազմական բյուջեի թիվը կարող է տարվա ընթացքում փոխվել:

Պատգամավորի պնդումը, թե առաջին անգամ ներկայիս իշխանության ժամանակ է, որ Ադրբեջանի միայն ռազմական բյուջեն ավելի չէ Հայաստանի ամբողջ պետական բյուջեից, սխալ է եւ ժամանակավրեպ: Այս հայտարարությունը արդիական չէ՝ սկսած 2015-ից: Մինչ այդ, այո՛, Ադրբեջանի ռազմական բյուջեն ավելի մեծ է եղել ՀՀ ամբողջ պետական բյուջեից, սակայն իրավիճակը փոխվել է 2015-ից:

Հայաստանի պետբյուջեն 2023-ին կազմում է մոտ 6,5 մլրդ դոլար (ծախսերը), իսկ Ադրբեջանի ռազմական բյուջեն 3,1 մլրդ դոլար: 2023-ի բյուջեով Հայաստանի ռազմական ծախսերը ծրագրված են մոտ 1,3 մլրդ դոլար, ինչը մոտ 2,5 անգամ պակաս է Ադրբեջանի ռազմական ծախսերից:

Այսպիսով, Վահագն Ալեքսանյանի պնդումը, թե առաջին անգամ իրենց իշխանության օրոք է, որ Ադրբեջանի ռազմական բյուջեն ՀՀ ամբողջ պետական բյուջեից մեծ չէ, սխալ է:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ այս օրերին «Հայաստան» խմբակցության ներսում քննարկվում է Սեյրան Օհանյանի ու Արմեն Չարչյանի մանդատները վայր դնել-չդնելու հարցը: Բանն այն է, որ մինչ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի՝ ԱԺ գալը անձամբ Սեյրան Օհանյանն ու Արմեն Չարչյանը իրենց թիմակիցներին հայտնել են մանդատը վայր դնելու ցանկության մասին: Թիմակիցներն էլ նրանց հետ են պահել այդ մտադրությունից՝ ասելով, որ դա «թուլության» նշան կդիտարկվի, կստացվի՝ թե ընդունում են իրենց մեղքն ու «հետ են քաշվում»: Երկար քննարկումներից հետո պատգամավորներն էլ ընդառաջ են գնացել թիմակիցներին ու մանդատները չեն դրել: Տեղեկացանք, որ անձեռնմխելիությունից զրկվելուց հետո էլ Սեյրան Օհանյանն ու Չարչյանը շարունակում են օրակարգ բերել այս հարցը, բայց խմբակցության մեծամասնությունը դեմ է սրան. կարծում են, որ այդպիսով ՔՊ-ականներին խոսելու հերթական թեման կտան, թե իրենց հաջողվում է «մասնատել» ընդդիմությանը, ուստի ամեն կերպ փորձում են Օհանյանին ու Չարչյանին հետ պահել մանդատներից հրաժարվելու մտքից: Թե վերջում ինչ կստացվի, ժամանակը ցույց կտա: Ամեն դեպքում, նրանք դեռ շարունակում են մնալ պատգամավորներ:



«Ժողովուրդ» օրաթերթը փետրվարի 7-ին գրել էր, որ ՀՀ Սահմանադրական դատարանի դատավոր Սեդա Սաֆարյանը իր պաշտոնի հետ անհամատեղելի փաստաբանական գործունեություն է ծավալել: Գրել էինք նաեւ, որ դատավորը ինքնախոստովանել է իր անթույլատրելի արարքը գործընկեր դատավորների մոտ, որը արձանագրվել է ՀՀ Սահմանադրական դատարանում: «Ժողովուրդ» օրաթերթին հասած բացառիկ տեղեկությունների համաձայն՝ ՍԴ դատավորները հունվարի 10-ից համարել են, որ սկսվել է հաշվարկը, ու հենց այդ արձանագրության օրվանից արդեն իրենք ունեն երեք ամիս ժամանակ դիմում ներկայացնելու Սեդա Սաֆարյանի գործողության մասով: Եվ, ահա, 3 օրից կլրանա մեկ ամիսը, սակայն մինչ օրս որեւէ ՍԴ դատավոր Սեդա Սաֆարյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասով դիմում չի ներկայացրել: Դեռեւս կա երկու ամիս, ու ոչինչ բացառել հնարավոր չէ: Քանի Սեդա Սաֆարյանի եղբայրը արշավ է սկսել մեր թերթի դեմ եւ հայտարարել է, որ «Ժողովուրդ» օրաթերթը կեղծ տեղեկություն է տարածել ՍԴ դատավորների մոտ Սաֆարյանի ինքնախոստովանության մասով, դիմեցինք ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանին՝ խնդրելով տրամադրել հունվարի 10-ի Սեդա Սաֆարյանի խոստովանությունը՝ իր անօրինական քայլերի մասով: Արդյունքում երեկ՝ փետրվարի 10-ին, «Ժողովուրդ» օրաթերթը ՍԴ լրատվական ծառայությունից պաշտոնապես ստացավ Սեդա Սաֆարյանի աշխատակարգային նիստում իր կողմից արված խոստովանության պաշտոնական արձանագրությունը: Ներկայացնում ենք ՍԴ դատավոր Սեդա Սաֆարյանի խոստովանության փաստաթուղթը՝ լուսանկարով:

Երեւանի քաղաքապետարանը տարին սկսել է կրծողների դեմ պայքարելով: «Ժողովուրդ» օրաթերթը պաշտոնական փաստաթղթերից տեղեկացավ, որ այդ նպատակով մի քանի տասնյակ միլիոն գումար է ծախսվել: Մեզ հայտնի դարձավ, որ Երեւանի քաղաքապետարանը, Կենտրոն, Նորք-Մարաշ եւ Արաբկիր վարչական շրջանները դեռատիզացիոն ծառայության համար պետական բյուջեից ընթացիկ տարում ծախսելու են ընդհանուր 30 մլն 829 հազար դրամ կամ 77 հազար դոլար: Պայմանագիրը կնքվել է երկու՝ «Դավ-Հակ» եւ «Վահ Գրիգ» ընկերությունների հետ: Օրինակ՝ «Դավ-Հակ» -ի հետ կնքած պայմանագիրը 2-3 չափաբաժնով է, որի ընդհանուր արժեքը կազմում է 12 մլն 511 հազար դրամ, իսկ «Վահ Գրիգ» ընկերության պայմանագրի արժեքը 18 մլն 318 հազար դրամի չափով է: Նշենք, որ ամիսը 3 անգամ պետք է պայքար իրականացվի կրծողների դեմ մեխանիկական եղանակով՝ թակարդ, վերշա, եւ քիմիական մեթոդով՝ օգտագործելով թունաքիմիկատներ, որոնք արգելված չեն ՄԱԿ-ի կողմից եւ թույլատրված են ՀՀ առողջապահության նախարարության կողմից: Թվում էր, որ բազմաբնակարան շենքերի մուտքերում տեղակայված աղբամուղները զոդելուց հետո կրծողները կվերանան, բայց ոչ. դեռ դրանց դեմ պայքարի համար մեծ գումարներ են փոխանցվում:

ԱՐԴՅՈՒՆՔ ՉԿԱ

ԾԱՆՐԱԳՈՒՅՆ ԻՐԱՎԻՃԱԿ Է ԱՐՑԱԽՈՒՄ

Արցախն արդեն 50 օրից ավել է՝ շրջափակման մեջ է: Ադրբեջանը հրաժարվում է բացել Արցախը Հայաստանին ու արտաքին աշխարհին կապող միակ ճանապարհը՝ Լաչինի միջանցքը, ինչի հետեւանքով Արցախում հումանիտար խորը ճգնաժամ է ստեղծվել, սնունդը, դեղորայքը եւ առաջին անհրաժեշտության մյուս ապրանքները գրեթե սպառվել են: Թեեւ տարբեր երկրներ եւ միջազգային կազմակերպություններ կոչ հայտարարություններով պարբերաբար կոչ են անում Ադրբեջանին բացել Արցախի կյանքի ճանապարհը, բայց՝ ապարդյուն: Ադրբեջանը նույնիսկ բանակցությունների դուրս չի գալիս այս հարցով ո՛չ հայկական կողմի, ո՛չ էլ անգամ ռուս խաղաղապահների հետ:

«Ժողովուրդ» օրաթերթը Արցախում ստեղծված իրավիճակի վերաբերյալ զրուցել է Արցախի ԱԺ պատգամավոր Մետաքսե Հակոբյանի հետ:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Արցախի Ազգային ժողովի «Արդարություն» խմբակցության պատգամավոր Մետաքսե Հակոբյանը պատմում է՝ Արցախում ծանրագույն իրավիճակ է, ջեռուցում չկա, հոսանքն օրվա մեջ ընդամենը 6 ժամ են տալիս, հիվանդներին հնարավոր չէ անհրաժեշտ բուժօգնություն տրամադրել, իսկ արցախցի երեխաները զրկված են իրենց կրթության իրավունքից, քանի որ ջեռուցում չլինելու պատճառով դպրոցները փակ են: Մետաքսե Հակոբյանը միեւնույն ժամանակ նշում է՝ արցախցիները նույնիսկ այս պայմաններում չեն տրտնջում, այլ գիտակցաբար պայքարում են:

Ըստ զրուցակցի՝ նույնիսկ նման ծանրագույն իրավիճակում ելքը իշխանությունների հեռացումն է:

-Տիկին Հակոբյան, ի՞նչ իրավիճակ է այս օրերին շրջափակված Արցախում:

-Արցախում սարսափելի ցուրտ է, բառերով հնարավոր չէ նկարագրել՝ ինչ իրավիճակ է այստեղ. ուժեղ ձյուն է տեղում, ու այս պայմաններում, պատկերացրե՛ք, մենք ջեռուցում չունենք: Արդեն մի քանի օր է՝ գազ չկա, օրվա մեջ ընդամենը 6 ժամ են հոսանքը տալիս, հովհարային անջատումներ են լինում, իսկ թույլ հոսանքով տունը տաքացնել չի լինում: Այս ամենին գումարած՝ երեխաները զրկված են կրթության իրավունքից, մարդկանց առողջական խնդիրները ավելի խորանում են, որովհետեւ պլանային վիրահատություններ չեն կատարվում, այս պայմաններում հնարավոր չէ մարդկանց անհրաժեշտ բուժօգնություն ցույց տալ: Այլ կերպ ասած՝ պատերազմ է, որտեղ ռումբեր չեն պայթում, բայց մարդիկ են ուղղակի մահանում: Սննդամթերքի ու առաջին անհրաժեշտության իրերի շատ տեսակներ արդեն սպառվել են. այն, ինչ հնարավոր եղավ կտրոններով տրամադրել ժողովրդին, սահմանափակ քանակով կա, մնացած պաշարները սպառվել են: Նման ծանրագույն պայմաններում 120.000 հազար արցախցի չեն տրտնջում, այլ պայքարում են՝ գիտակցելով, որ սա անում են՝ հանուն ամբողջ հայության, հանուն Հայաստանի ու Արցախի:

-Տիկին Հակոբյան, իսկ ինչպե՞ս են տրամադրված արցախցիները, նրանք ի՞նչ ելքեր են տեսնում այս ճգնաժամից:

-Մենք բազմիցս ասել ենք, որ խնդիրները չեն դադարելու, քանի դեռ չկա հստակ վարվող քաղաքականություն, ու դիվանագիտություն չկա: Հիմա էլ նույն իրավիճակն է. Հայաստանի իշխանության վարած քաղաքականությունը կա՛մ դեմ է հայերին, կա՛մ էլ ընդհանրապես չի վարվում: Ըստ իս՝ երկու դեպքում էլ ելքը մեկն է՝ ազատվել այն պատասխանատուներից, որոնք չեն վարում հայանպաստ քաղաքականություն, պետք է իշխանության գան այնպիսի մարդիկ, որոնք արդեն ազգանպաստ քայլեր կանեն, կլինեն ազգային իշխանություն: Ելքերը շատ են այս իրավիճակից, բայց ամեն ինչ մտնում է փակուղի, երբ խոսում ենք այս իշխանությունների մասին: Այս իշխանություններն ամեն ինչ հակառակ են անում: Այն հարթակները, դիվանագիտական խողովակները, որոնք այսօր ունեն Հայաստանի իշխանությունը, վարչապետը, համարյա թե չեն օգտագործվում, իսկ օգտագործվելու դեպքում էլ հանուն Արցախի ու Հայաստանի չեն օգտագործվում:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԵ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՕՐԵՆՔԻ ԽԱԽՏՈՒՄ

ԻՆՉՈ՞Ւ ԴԵՍՊԱՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՉԻ ԿԱՏԱՐՎՈՒՄ

«Դիվանագիտական ծառայության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով սահմանվում է, որ դեսպանները նշանակվում են մինչեւ չորս տարի ժամկետով, իսկ պաշտոնավարման ժամկետի ավարտից հետո անմիջապես այլ պետությունում դիվանագիտական ներկայացուցչի պաշտոնում նշանակվելու դեպքում՝ մինչեւ երեք տարի ժամկետով: Այդ ժամկետների փոփոխությունը կարող է լինել բացառիկ դեպքերում:

Այժմ Հայաստանի Հանրապետությունում ունենք իրավիճակ, երբ ժամկետները խախտվել են: Մասնավորապես, չորս տարվա պաշտոնավարման ժամկետը խախտվել է, եւ շարունակում են պաշտոնավարել Շվեդիայում (նաեւ Դանիայում, Ֆինլանդիայում եւ Իսլանդիայում) ՀՀ դեսպան Ալեքսանդր Արզումանյանը, 2017 թվականի նոյեմբերի 17-ին Ռումինիայում ՀՀ դեսպան է նշանակվել Սերգեյ Մինասյանը, որը պաշտոնավարում է հինգ տարուց ավելի: Չորս տարի եւ ինը ամիս ժամկետից ավել շարունակում է պաշտոնավարել Ֆրանսիայում ՀՀ դեսպան Հասմիկ Տոլմաջյանը: Չորս տարուց ավելի ժամկետով դեսպանի պաշտոնում պաշտոնավարում են նաեւ Նիդերլանդներում ՀՀ դեսպան Տիգրան Բալայանը, Լեհաստանում ՀՀ դեսպան Սամվել Մկրտչյանը, Ավստրիայում ՀՀ դեսպան Արմեն Պապիկյանը, Չեխիայում եւ մի շարք այլ երկրներում ՀՀ դեսպան Աշոտ Հովակիմյանը, Սուրբ Աթոռում նաեւ Պորտուգալիայում ՀՀ դեսպան Կարեն Նազարյանը:

«Ժողովուրդ» օրաթերթը հարցում էր ուղարկել ՀՀ արտաքին գործերի նախարարություն եւ հետաքրքրվել՝ ինչու դեսպանների փոփոխություն չի կատարվում, եւ խախտվում է օրենքը: Ի պատասխան՝ ՀՀ ԱԳՆ լրատվական ծառայությունից հայտնեցին, թե օրենք չի խախտվել: Պատասխանի համաձայն՝ դեսպանների ռոտացիան տեղի է ունենում բնականոն կերպով՝ ըստ անհրաժեշտության եւ ընթացիկ աշխատանքներից բխող նպատակահարմարության:

ԹԱՓՈՒՐ ՀԱՄՏԻՔՆԵՐ՝ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Հայաստանի պետական գերատեսչություններում կան վարչություններ եւ բաժիններ, որոնք տեւական ժամանակ է՝ աշխատողներ չունեն: Թափուր աշխատատեղեր են առկա շատ գերատեսչություններում: Որքան էլ իշխանությունները՝ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ, փորձում են գրավիչ դարձնել պետական համակարգը, փաստ է, որ պետական գերատեսչությունների կայքերում չեն դադարում առկա թափուր աշխատատեղերի մասին հայտարարությունները, քանի որ մարդիկ խուսափում են պետական աշխատանքի անցնել:

Այս անգամ «Ժողովուրդ» օրաթերթը կանդրադառնա ՀՀ կրթության եւ գիտության նախարարությանը: Ըստ հաստիքացուցակի՝ նախարարությունը պետք է ունենա 331 հաստիք: Նույն այս հաստիքացուցակով նախատեսված է, որ նախարարը կարող է ունենալ 6 տեղակալ, սակայն «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ այս պահին կրթության, գիտության,մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանն ունի 5 տեղակալ: Հետաքրքիր է, որ նախարարությունը չունի նաեւ գլխավոր քարտուղար, սակայն ունի գլխավոր տեղակալի քարտուղար:

Ամեն դեպքում, պաշտոնական կայքում առկա տվյալներն են այդ մասին հուշում: Անդրադառնանք վարչություններին. Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության վարչությունը չունի պետի տեղակալ, իսկ պետ չունի նախնական եւ միջին մասնագիտական կրթության վարչությունը: Բաժիններում եւս կան թափուր տեղեր, օրինակ՝ պետեր չունեն Փաստաթղթերի ուսումնասիրման եւ դատական գործերի բաժինը, Օրենսդրության բաժինը, Ջորահավաքային նախապատրաստության բաժինը, Ընդհանուր բաժինը: Այս պահին նախարար Անդրեասյանը չունի նաեւ մամուլի քարտուղար: Սա վկայում է մեկ բանի մասին. կա՛մ իշխանությունները չեն կարողանում կադրեր գտնել, կա՛մ էլ պրոֆեսիոնալ կադրերը չեն ցանկանում աշխատել այս իշխանությունների հետ:

ԱՐՑԱԽԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍԻՐԻԱՅԻՆ

Արցախի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորները եւ աշխատակազմը 1 մլն 13 հազ ՀՀ դրամի չափով աջակցություն են ցուցաբերել Սիրիայի Հանրապետությունում փետրվարի 6-ին տեղի ունեցած երկրաշարժի հետեւանքով տուժած սիրիահայերի ընտանիքներին:

Այս մասին տեղեկացնում է ԱՀ լրատվության եւ հանրության հետ կապերի բաժինը:

Ավելի վաղ Արցախի տեղեկատվական շտաբն իրազեկել էր, որ, չնայած շրջափակման ծանր պայմաններին, Արցախի կառավարությունը, համագործակցելով «Հայ օգնության միության» Արցախի մասնաճյուղի հետ, որոշում է կայացրել միանալ համահայկական օժանդակության աշխատանքներին՝ կազմակերպելով դրամահավաք եւ զորակցելով Սիրիայում ապրող հայերին:

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ԴԵՍՊԱՆԻ ՀԵՏ

Աժ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը գրում է. «Խորհրդարանում հանդիպել եմ Հայաստանի Հանրապետությունում Շվեյցարիայի Համադաշնության արտակարգ եւ լիազոր դեսպան Լուկաս Ռոզենկրացի հետ:

Աշխատանքային քննարկման ընթացքում շոշափել ենք փոխադարձ հետաքրքրության մի շարք հարցեր, որոնք առնչվում են մարդու իրավունքներին: Շվեյցարիան այն երկիրն է, որ իսկապես գնահատում է մարդու իրավունքները՝ առանց խտրականություն դնելու»:

ԾԵԾԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Աժ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը սոցցանցի իր էջում գրում է. «Փետրվարի 9-ի գիշերը ահազանգ եմ ստացել առ այն, որ ոստիկանության Երեւան քաղաքի էրեբունու բաժնի օպերատիվ հետախուզության բաժնի աշխատակիցները բիրտ ուժի կիրառմամբ բերման են ենթարկել անչափահաս ուսանողների, ծեծի ենթարկել եւ խոշտանգել նրանց:

Առավոտյան էլ Փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանի եւ Փաստաբանական դպրոցի ղեկավար Արա Ջոհրաբյանի ասուլիսից պարզվեց, որ հաջորդ օրն անչափահասներին իրավաբանական օգնություն ցույց տալու նպատակով ոստիկանության բաժին ներկայացած փաստաբանների նկատմամբ է բռնություն գործադրվել, սպառնացել եւ հայհոյել են նրանց մասնագիտական գործունեությունը կատարելիս:

Անձամբ տեսել եմ ծեծի ենթարկված երեխաների կադրերը, ինչը դատապարտելի է, եւ պետք է հետեւի անխուսափելի պատիժ ինչպես ոստիկանության աշխատակիցներին, այնպես էլ էրեբունու ոստիկանապետին: Շտապ գրություններ եմ պատրաստում ներքին գործերի նախարարին՝ պահանջելով բացատրություն դեպքի առթիվ, ինչպես նաեւ պատասխանատու անձանց ենթարկել կարգապահական պատասխանատվության՝ ընդհուպ մինչեւ լիազորությունների դադարեցում:

Հ. Գ. Լուսանկարը ստոպ կադր է, որտեղ երեւում է անչափահաս տղայի՝ ծեծի հետեւանքով պատռված հագուստն ու փոշոտ շորերը, որոնք նրան գետնին տապալելու հետեւանք են...»:

ԿՈՉ՝ ԱԴՐԲԵՋԱՆԻՆ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆՈՐ ԶԵԿՈՒՅՑԸ

Եվրոպական խորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովը նոր զեկույց է հրապարակել, որում կոչ է անում Ադրբեջանին դուրս բերել զորքերը Հայաստանի տարածից: «Խաղաղության ցանկացած պայմանագիր պետք է ներառի Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականությունը, Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության իրավունքներն ու անվտանգությունը, փախստականների եւ ներքին տեղահանվածների արագ եւ անվտանգ վերադարձը իրենց տներ»,- ընդգծված է զեկույցում:

«Եվրամիություն-Հայաստան հարաբերությունների վերաբերյալ զեկույցը եւս մեկ անգամ վերահաստատում է Եվրախորհրդարանի հավատարմությունը տարածաշրջանում խաղաղությանը եւ մի շարք կարեւոր ոլորտներում Հայաստանի եւ ԵՄ համագործակցությանը: Որպես այս ուղղությամբ կենսական քայլ՝ մենք ողջունում ենք Հայաստանում ԵՄ առաքելության ստեղծումը եւ կոչ ենք անում Ադրբեջանի կառավարությանը երաշխավորել տեղաշարժի ազատությունն ու անվտանգությունը Լաչինի միջանցքով, որը գրեթե երկու ամիս արգելափակված է», - հայտարարել է զեկուցող Անդրեյ Կովաչեւը (ԵԺԿ, Բուլղարիա) քվեարկությունից հետո:

Հայաստան-ԵՄ հարաբերությունները վերանայող զեկույցում Եվրախորհրդարանի պատգամավորները խստորեն դատապարտում են 2022 թվականի սեպտեմբերին Ադրբեջանի կողմից Հայաստանի վրա իրականացված լայնածավալ ռազմական հարձակումը:

Եվրախորհրդարանի պատգամավորները գովաբանում են Հայաստանին վերջին տարիներին ձեռնարկած նշանակալի բարեփոխումների եւ ժողովրդավարացման գործընթացի համար՝ բարեփոխումներ, «որոնց արդյունքում երկիրը դարձավ ժողովրդավարության առաջատարը տարածաշրջանում»:

Եվրախորհրդարանի պատգամավորները վերահաստատում են, որ արդյունավետ լինելու համար ցանկացած խաղաղ պայմանագիր պետք է ներառի դրույթներ, որոնք երաշխավորում են Հայաստանի ինքնիշխան տարածքի ամբողջականությունը, Լեռնային Ղարաբաղում եւ հակամարտությունից տուժած այլ շրջաններում բնակվող հայ բնակչության իրավունքներն ու անվտանգությունը, նաեւ փախստականների եւ ներքին տեղահանվածների արագ եւ անվտանգ վերադարձը իրենց տներ:

Զեկույցը ողջունում է 2021 թվականի մարտին Հայաստան-ԵՄ համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ, CEPA)՝ ամբողջական ուժի մեջ մտնելը եւ Հայաստանի հանձնառությունը դրա իրականացմանը:

Նրանք նաեւ կոչ են անում ԵՄ-ին եւ Հայաստանին սերտորեն աշխատել CEPA-ի շրջանակում ընթացիկ եւ ապագա բարեփոխումների իրականացման վրա՝ միաժամանակ ընդգծելով, որ դա ընդգրկում է համատեղ աշխատանքի լայն շրջանակ՝ ներառյալ ժողովրդավարության, օրենքի գերակայության եւ մարդու իրավունքների ամրապնդումը, տնտեսական աճի եւ ոլորտային համագործակցության խթանումը:

Բացի այդ, զեկույցը ճանաչում է Հայաստանի պայքարը հանցավորության եւ կոռուպցիայի դեմ ու խրախուսում Կառավարությանը՝ շարունակելու բարեփոխումների իրականացումը ժողովրդավարական ինստիտուտների, օրենքի գերակայության եւ դատական անկախության ամրապնդման համար՝ չնայած միջազգային բարդ համատեքստին եւ Հայաստանի առջեւ ծառացած մարտահրավերներին:

Ողջունելով լրատվամիջոցների ազատության բարելավումները՝ Եվրախորհրդարանի պատգամավորները շեշտում են, որ երկրի մեդիա միջավայրը դեռեւս բնութագրվում է բեւեռացվածությամբ, եւ իրենք մտահոգված են լրագրողների նկատմամբ ատելության խոսքի եւ ֆիզիկական բռնության դեպքերով:

Եվրախորհրդարանի պատգամավորները նաեւ անհանգստացած են Հայաստանում ռուսական ապատեղեկատվական արշավներից՝ ուղղված Եվրամիության ու Արեւմուտքի դեմ, եւ կոչ են անում ջանքեր գործադրել՝ բարելավելու երկրում մեդիա ոլորտի բազմազանությունը եւ մեդիագրագիտությունը: Լիովին աջակցելով ապատեղեկատվության դեմ պայքարում Հայաստանի կառավարության ջանքերին՝ Եվրախորհրդարանի պատգամավորները միաժամանակ ընդգծում են, որ որեւէ միջոց չպետք է հանգեցնի լրագրողների կամ խոսքի ազատության սահմանափակումների:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԽՆԴԻՐ

Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Կատրին Կոլոնան հեռախոսով բանակցել է ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենի հետ՝ քննարկելով նաեւ իրավիճակն Արցախում. այս մասին տեղեկացրել է Ֆրանսիայի ԱԳՆ մամուլի ծառայությունը:

Ֆրանսիան եւ ԱՄՆ-ն ընդգծել են Լաչինի միջանցքով ազատ տեղաշարժն անհապաղ ապահովելու անհրաժեշտությունը:

«Նախարարը եւ պետքարտուղարը նաեւ քննարկել են իրավիճակը Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերություններում, ամփոփել հակամարտության կարգավորմանն ուղղված ջանքերը եւ ընդգծել Լաչինի միջանցքով ազատ տեղաշարժն անհապաղ վերականգնելու անհրաժեշտությունը: Ներկա շրջափակման լուրջ հումանիտար հետեւանքները Լեռնային Ղարաբաղի բնակչության համար անընդունելի են, եւ Ֆրանսիան ու Միացյալ Նահանգները միավորում են ջանքերը, որպեսզի վերջ դնեն այդ իրավիճակին վարչապետ Փաշինյանի եւ նախագահ Ալիեւի միջեւ շփումների միջոցով»,- նշվել է Ֆրանսիայի ԱԳՆ-ի հաղորդագրությունում:

ԱՆԴՐԱԴԱՐՁ

Փետրվարի 9-ին ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանն ընդունել է ԵԱՀԿ Մինսկի խմբի ռուսաստանցի համանախագահ, Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերությունների կարգավորմանն աջակցելու հարցերով ՌԴ արտաքին գործերի նախարարի հատուկ ներկայացուցիչ Իգոր Խովաեւին:

Զրուցակիցները մտքեր են փոխանակել Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերությունների կարգավորման գործընթացի վերջին զարգացումների շուրջ:

Արարատ Միրզոյանը նշել է, որ ադրբեջանական կողմի սադրանքները, ՀՀ ինքնիշխան տարածքի նկատմամբ նկրտումներն ու ռազմատենչ հռետորաբանությունը խոչընդոտում են տարածաշրջանում խաղաղության եւ կայունության հաստատմանը:

ԲԱՐՁՐ ԵՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Կոսովոյի ուժերի հրամանատարության կողմից ստուգվել է Կոսովոյում խաղաղապահ առաքելություն իրականացնող հայկական զորախմբի մարտունակությունը: Ստորաբաժանումը բերվել է բարձր մարտական պատրաստականության վիճակի: Առաջադրված խնդիրները զորախումբը իրականացրել է ժամանակին եւ որակով:

Կոսովոյի ուժերի հրամանատարությունը բարձր է գնահատել հայ խաղաղապահների պատրաստվածությունը. այս մասին տեղեկացնում են ՀՀ ՊՆ-ից:

ԽԱՐԴԱԽՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԳՈՒՄԱՐ ԵՆ ՀԱՓՇՏԱԿԵԼ

Կառավարության 2009 թվականի մայիսի 29-ի որոշմամբ Արագածոտնի մարզպետի պաշտոնին նշանակված Ս.Մ.-ն, ի պաշտոնե տեղյակ լինելով Հյուսիս-հարավ միջանցքի շինարարության իրականացման ծրագրի մասին, որն անցնելու է նաեւ Մ-1 Երեւան-Գյումրի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհով, այդ թվում՝ նաեւ Արագածոտնի մարզի Կաֆավանոր համայնքի վարչական տարածքով, նախնական համաձայնության գալով այդ ժամանակ Կաֆավանոr համայնքի ղեկավարի պաշտոնը զբաղեցնող Ս.Մ.-ի եւ իր եղբոr՝ Ն.Ս.-ի հետ, խաբեության՝ հողամասի նպատակային նշանակության փոփոխման եղանակով դրա կադաստրային արժեքը արհեստականորեն բարձրացնելու եւ հետագայում նույն հողամասը պետությանը զգալիորեն բարձր գնով վաճառելու նպատակով խեղաթյուրել է Ն.Ս.-ի կողմից 2005 թվականին Կաֆավանոr համայնքից աճուրդ-վաճառքով 35 հազար 200 դրամով գնված 7800 մ2 մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողատարածքի գործառնական նշանակության տեսակը:

Նպատակ ունենալով նշված հողատարածքն անհամեմատ բարձր գներով վաճառել ՀՀ-ի անունից հանդես եկող «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք ներդրումային ծրագիր իրականացնող կազմակերպություն» ՊՈԱԿ-ին (այսուհետեւ՝ՊՈԱԿ)՝ մարզպետ Ս.Ս.-ն թույլատրել է իր եղբորը՝ Ն.Ս.-ին, 2009 թվականի օգոստոսի 6-ից հետո իրականացնել ապօրինի շինարարական աշխատանքներ՝ նշված գյուղատնտեսական նշանակության հողատարածքի վրա կառուցել ինքնակամ շինություններ, ապա, օգտագործելով իր հեղինակությունը մարզի տարածքում, ի պաշտոնե ազդելով համայնքի ղեկավար Ս.Մ.-ի վրա, համոզելու եղանակով դրդել է վերջինիս չարաշահել պաշտոնեական լիազորություններն ու կատարել պաշտոնեական կեղծիք:

Մասնավորապես, Ազգային անվտանգության քննչական դեպարտամենտում քննված քրեական վարույթով պարզվել է, որ Ս.Ս.-ն, հաստատապես տեղյակ լինելով ինքնակամ շինությունների օրինականացման գործընթացում համայնքի ղեկավարի կողմից ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն «Ինքնակամ կառուցների օրինականացման եւ տնօրինման կարգը հաստատելու մասին» որոշման պահանջները խախտելու հանգամանքի մասին, շահադիտական դրդումներով, եղբորը համաստեփականությամբ պատկանող հողատարածքը 2010 թվականի մարտի 4-ին ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ուղարկված գրությամբ ներառել է «Հյուսիս-հարավ միջանցքի ներդրումային ծրագրի շրջանակներում ՀՀ վարչական սահմաններում գտնվող որոշ տարածքներում բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին» օտարման ենթակա տարածքների ցանկում՝ իրական հնարավորություն ստեղծելով ձեռք բերված արժեքը զգալիորեն գերազանցող գումարով այն վաճառելու եւ այդ կերպ խարդախությամբ պետական միջոցներից հատկացված առանձնապես խոշոր չափերի գումարները հափշտակելու մտադրությունն իրագործելու համար:

Իր հերթին, Մ.Ղ.-ն, 2013 թվականի մարտի 7-ից փաստացի հանդիսանալով անշարժ գույքի գնահատում իրականացնող համապատասխան ընկերության տնօրենը, ՊՈԱԿ-ի հետ կնքված պայմանագրի շրջանակներում գնահատման ենթակա օբյեկտների վերաբերյալ իր կողմից կազմված կեղծ հաշվետվության մեջ ներառել է իրականությանը չհամապատասխանող կեղծ տեղեկատվություն եւ որպես փաստացի փոխհատուցման արժեք 67 մլն 440 հազար դրամ արժողությամբ գույքը հաշվարկել 139 մլն 994 հազար 233 դրամով: Դրանից հետո իր կողմից կազմված կեղծ գնահատման հաշվետվությունն օգտագործելու համար տրամադրել է ՊՈԱԿ-ին:

Վերը նշվածից օգտվելով՝ մարզպետ Ս.Ս.-ի եղբայր Ն.Ս.-ն, 2013 թվականի դեկտեմբերի 3-ին ՊՈԱԿ-ի հետ կնքել է հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման վերաբերյալ պայմանագիր: Արդյունքում նշված անշարժ գույքը, 67 մլն 440 հազար դրամի փոխարեն, վաճառել է 139 մլն 923 հազար 733 դրամով՝ այդկերպ խարդախությամբ հափշտակելով պետության առանձնապես խոշոր չափերի՝ 72 մլն 448 հազար 533 դրամը:

2023 թվականի փետրվարի 6-ին ՀՀ գլխավոր դատախազությունում ստացվել է քրեական վարույթն ըստ մեղադրանքի՝ Ն.Ս.-ի՝ 2003թ. ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 38-308-րդ հոդվածի 2-րդ մասով (պաշտոնեական լիազորությունները չարաշահելու դրդում, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետեւանքներ) եւ 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ առանձնապես խոշոր չափերով խարդախություն), Ս.Ս.-ի՝ 2003թ. ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով (պաշտոնեական լիազորությունները չարաշահելը, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետեւանքներ), 38-308-րդ հոդվածի 2-րդ մասով (պաշտոնեական լիազորությունները չարաշահելու դրդչություն, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետեւանքներ) եւ 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ առանձնապես խոշոր չափերով խարդախություն), Ս.Մ.-ի՝ 2003թ. ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով (պաշտոնեական լիազորությունները չարաշահելը, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետեւանքներ) եւ 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ առանձնապես խոշոր չափերով խարդախություն), Մ.Ղ.-ի՝ 2003թ. ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ առանձնապես խոշոր չափերով խարդախության օժանդակություն), Մ.Ղ.-ի՝ 2003թ. ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ առանձնապես խոշոր չափերով խարդախության օժանդակություն):

2023 թվականի փետրվարի 9-ին հսկող դատախազի կողմից որոշում է կայացվել՝ մեղադրական եզրակացությունը հաստատելու եւ քրեական վարույթը Հակակոռուպցիոն դատարանին հանձնելու վերաբերյալ:

Նույն օրը դատախազի կողմից ներկայացվել է գույքային հայց՝Ն.Ս.-ից, Ս.Ս.-ից, Ս.Մ.-ից ու Մ.Ղ.-ից հօգուտ ՀՀ պետական բյուջե համապարտության կարգով 72 մլն 448 հազար 533 դրամ բռնագանձելու վերաբերյալ:

ԿԻՆԸ ԲՈՂՈՔԵԼ Է

Փետրվարի 9-ին՝ ժամը 11:18-ին, ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն զանգած կինը հայտնել է, որ ժամը 10:50-ին Շովրոյան փողոցի շենքերից մեկի մի բնակարանում տեղի ունեցած վիճաբանության ժամանակ նախկին ամուսինը բռնել էr իr դարանոցից, քաշել մազերից եւ խփել դեմքին՝ պատճառելով վնասվածքներ:

ՀՀ ոստիկանության տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունից հայտնում են, որ ՆԳՆ ոստիկանության ՊԾ Երեւանի գնդի 2-րդ գումարտակի 3-րդ վաշտի պարեկները մարմնական վնասվածք պատճառելու կասկածանքով նշված բնակարանում ձերբակալել եւ ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժին են տեղափոխել 49-ամյա տղամարդուն: Խուզարկությամբ նրա բաճկոնի գրպանից հայտնաբերվել է 15 սմ երկարությամբ ծալովի դանակ: Տղամարդը եւ կազմված փաստաթղթերը ներկայացվել են նախաքննական մարմին:

ԼՈՒՐԵՐ

ԻՆՉ Է ԿԱՏԱՐՎԵԼ

ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ փետրվարի 8-ին ոստիկանության Երեւան քաղաքի էրեբունու բաժնի օպերատիվ հետախուզության բաժնի աշխատակիցները բիրտ ուժի կիրառմամբ բերման են ենթարկել անչափահաս ուսանողների, ծեծի ենթարկել եւ խոշտանգել: Արդեն հաջորդ օրն անչափահասներին իրավաբանական օգնության ցույց տալու նպատակով ոստիկանության բաժին ներկայացած փաստաբանների նկատմամբ շուրջ 4 որպե անընդմեջ բռնություն են գործադրել, ծեծի ենթարկել, սպառնացել եւ հայհոյել նրանց մասնագիական գործունեության կապակցությամբ:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԿԱՆԽՎԵԼ Է ՏԵՂԱՓՈԽՈՒՄԸ

Վերջին օրերին Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի մաքսանենգության դեմ պայքարի վարչության Գուգարքի եւ Շիրակի տարածաշրջանային բաժինների աշխատակիցների կողմից թիրախային եւ ուժեղացված ծառայություն է իրականացվել սահմանային անցման կետերում: ՀՀ ՊԵԿ տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժնից հայտնում են, որ իրականացված հսկողական աշխատանքների արդյունքում Վրաստանի Հանրապետությունից Հայաստանի Հանրապետություն եւ հակառակ ուղղությամբ կանխվել է ավելի քան 1150 գրամ քաշով ոսկյա եւ այլ թանկարժեք մետաղներից պատրաստված զարդերի ապօրինի՝ առանց սահմանված կարգով հայտարարագրման տեղափոխումը Բավրայի եւ Բագրատաշենի մաքսային կետերով: Փաստերի առթիվ, «ՀՀ մաքսային կարգավորման մասին» օրենքի 316-րդ հոդվածով, կազմվել են մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրություններ եւ նյութերի հետ տրամադրվել են ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչություն հետագա ընթացքն ապահովելու նպատակով:

ԱՊՕՐԻՆԻ ԹՄՐԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ

Փետրվարի 6-ին Աշտարակի քրեական հետախույզները օպերատիվ տվյալներ էին ստացվել ապօրինի թմրաշրջանառության վերաբերյալ: Երեւան-Աշտարակ ճանապարհին հայտնաբերվեց, ձերբակալվեց եւ Նաիրիի բաժին տեղափոխվեց 61-ամյա մի տղամարդ: Նրա խուզարկությամբ հայտնաբերվեցին Սուբուտեքսի հաբեր, Մարիխուանայի նմանվող զանգված, ծալովի դանակ եւ այլն: Իրավապահներն արդեն տեղյակ էին, թե նա ումից էր ձեռք բերել Սուբուտեքսը: Երկու ժամ անց հայտնաբերվեց ու ձերբակալվեց նաեւ իրացնողը: Նոր Հաճնի 45-ամյա բնակչի խուզարկությամբ հայտնաբերվեցին մոխրացած հետքերով կաթուցիչ, Մարիխուանայի նմանվող զանգվածներ, «B8» գրառմամբ հաբեր ու ծալովի դանակ: Ձերբակալվածի հայտնածով՝ զանգվածները թմրանյութ են, իսկ հաբերը՝ Սուբուտեքս, որոնք պետք է վաճառեր: Փետրվարի 7-ին, դատարանի որոշմամբ, խուզարկվեց Նոր Հաճնի բնակչի տունը: Հայտնաբերվեցին ընդհանուր 60 գրամից ավելի քաշով Մարիխուանայի նմանվող զանգվածներ, գլանակներ, կաթուցիչներ, կանեփի սերմեր, դեղահաբեր եւ այլն: Իրավապահները խուզարկեցին նաեւ նրա ավտոմեքենան՝հայտնաբերելով Սուբուտեքսի 52 հաբ: Նախաքննությամբ հանգամանքները պարզվում են:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ փետրվարի 9-ից 10-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 77 դեպք, որոնցից 8-ը՝նախկինում կատարված:*

ԼՈՒՐԵՐ

ՆՈՐ ՄՐՑՈՒՅԹ

Սեւ ջուր գետի կամրջի հիմնանորոգման նոր մրցույթ է հայտարարվելու: Այս մասին ArmLur.am-ին հայտնեցին «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամից՝ տեղեկացնելով, որ մրցույթը կհայտարարվի վաղը: Մեզ հայտնի դարձավ, որ հիմնանորոգման աշխատանքների ձեռք բերման մրցույթը 2022 թվականին է հայտարարվել, սակայն չի կայացել մրցույթին դիմած միակ մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա անճշտությունների պատճառով: Այս մրցույթին հաղթող մասնակից կունենանք, թե ոչ, ցույց կտա ժամանակը, բայց նկատենք, որ սայլը փոքր-ինչ տեղից շարժվել է:

Չէ՞ որ մոտ մեկ տարի է, ինչ Նիկոլ Փաշինյանի կառավարությունը չի կարողանում նորոգել դեռեւս նախորդ տարվա մարտին փլուզված կամուրջը: Այն արդեն մի քանի ամիս է, ինչ անանցանելի է: Ի դեպ, կամրջի ճաքած հատվածը շրջանցելու նպատակով տեղի բնակիչներն անիվներ են տեղադրել ու ժապավենով առանձնացրել երթեւեկելի մասից:

ՍՏԵՆԴԱՎՈՐՈՒՄԸ՝ ՊԵՏՊԱՏՎԵՐՈՎ

Աորտայի անեւրիզմաների պատռվածքների եւ շերտազատումների վիրահատությունները պետական պատվերի շրջանակներում նախատեսվում է որպես «Կյանք փրկող» ծրագիր իրականացնել ՀՀ ամբողջ բնակչության համար: Խոսքը սրտամկանի սուր ինֆարկտի (կորոնար անոթների ստենտավորում), գլխուղեղի սուր կամ ենթասուր իշեմիկ եւ այլ հիվանդությունների մասին է: ՀՀ առողջապահության նախարարությունն առաջարկում է փոխհատուցումը նշված ծրագրի շրջանակներում ըստ մարդաշնչի փոխհատուցվող միջոցառումների շրջանակներում իրականացվող աշխատանքները փոխհատուցել պայմանագրային գումարով բյուջեի չսահմանափակման սկզբունքով:

Տեղեկացնենք, որ ներկայումս այս ծառայությունները պետպատվերի շրջանակում իրականացվում են միայն որոշմամբ սահմանված սոցիալապես անապահով եւ հատուկ խմբերում ընդգրկված շահառուների համար:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ գործող կարգով զորակոչային տարիքի անձանց արտահիվանդանոցային դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունները եւ Հայաստանի օլիմպիական եւ օլիմպիական ընտանիքի մարզաձ??երի ազգային հավաքականների անդամների բժշկական օգնությունը եւ սպասարկումը ներկայումս իրականացվում է հերթագրման սկզբունքով, ?ակայն առողջապահության նախարարությունն առաջարկում է այդ շահառուների բժշկական օգնությունը եւ սպասարկումը իրականացնել արտահերթ կարգով:

ՍՅՈՒՆԷ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՊԵԿ–Ը ԿԱՅՔ Է ԳՈՐԾԱՐԿԵԼ

Ուսումնասիրվել են կազմակերպությունների եւ ֆիզիկական անձանց կողմից 2023 թվականի ընթացքում ստացված բոլոր դիմումները, որոնք առնչվում են տրանսպորտային միջոցների՝ ԵԱՏՄ շրջանակում էլեկտրոնային տեխնիկական անձնագրերով հաշվառվելու համար կարգավիճակ ունենալու վերաբերյալ տեղեկատվությանը:

Պետական եկամուտների կոմիտեից հայտնում են, որ դիմումատուների կողմից նշված տրանսպորտային միջոցների վերաբերյալ VIN նույնականացման համարներով տեղեկատվության առկայությունը ստուգվել է ՌԴ դաշնային մաքսային ծառայության պաշտոնական կայքի «ԵԱՏՄ անդամ-երկրների տարածք ներմուծված մարդատար ավտոմեքենաների մաքսային ձեւակերպումների մասին տեղեկատվություն» բաժնում (www.customs.gov.ru): Արդյունքում պարզվել է, որ որոշ ավտոմեքենաների դեպքում VIN նույնականացման համարներով տրանսպորտային միջոցներն առկա չեն վերոնշյալ կայքում:

Ելնելով վերոգրյալից՝ ՊԵԿ-ը դիմել է ՌԴ դաշնային մաքսային ծառայությանը դիմումատուների կողմից ներկայացված, սակայն նշված կայքում բացակայող տրանսպորտային միջոցների տվյալները կայքի համապատասխան բաժնում տեղադրելու նպատակով:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ ՊԵԿ-ի կողմից մշակվել է https://vehicles.customs.am կայքը, որի միջոցով VIN նույնականացման համարներով որոնմամբ հնարավոր է պարզել տրանսպորտային միջոցի վերաբերյալ տեղեկատվությունը, այդ թվում՝ բացթողնման ամսաթիվը: Այս առումով հիշեցնում ենք, որ տրանսպորտային միջոցները, որոնց համար մաքսատուրքերը, հարկերը վճարվել են ԵԱՏՄ դրույքաչափերից տարբերվող դրույքաչափերով, 2023 թ. հունվարի 1-ից ձեռք են բերել ԵԱՏՄ ապրանքի կարգավիճակ: Բացառություն են կազմում դեռեւս 2020թ.-ի տարեսկզբին ներմուծված 339-ը տրանսպորտային միջոցները, որոնց հայտարարագրումը թույլատրվել է իրականացնել ԵՏՀ խորհրդի որոշումներով, եւ այդ մեքենաները մաքսազերծվեցին 2019 թ.-ի՝ ավելի ցածր դրույքաչափերով: Նշված 339 տրանսպորտային միջոցները ԵԱՏՄ ապրանքի կարգավիճակ կստանան 2025 թ. ապրիլի 1-ից կամ ԵԱՏՄ միասնական դրույքաչափի տարբերության վճարման դեպքում:

ԵԱՏՄ ապրանքի կարգավիճակ չունեցող 339 տրանսպորտային միջոցների ցանկը զետեղված է ՊԵԿ պաշտոնական կայքում, հետեւաբար ավտոմեքենաների կարգավիճակի մասին ՀՀ ՊԵԿ դիմում գրելու եւ համապատասխան տեղեկանք ստանալու անհրաժեշտություն այլեւս չկա: Անհրաժեշտ է պարզապես ստուգել տվյալ տրանսպորտային միջոցի առկայությունը ցանկում: Եթե տվյալ տրանսպորտային միջոցը չկա ցանկում, ապա այն ավտոմատ ձեռք է բերում ԵԱՏՄ ապրանքի կարգավիճակ:

Միաժամանակ, կոմիտեն հայտնում է, որ պաշտոնական գրություններով տեղեկացրել են նաեւ ԵԱՏՄ գործընկեր կառույցներին. բոլոր գործընթացները համապատասխանում են ԵԱՏՄ օրենսդրությանը:

Բացի այդ, ՌԴ դաշնային մաքսային ծառայությունը ս. թ. փետրվարի 9-ին իր պաշտոնական կայքեջում եւ տելեգրամյան ալիքում եւս մեկ անգամ վերահաստատել է վերոհիշյալ տեղեկատվությունը եւ ներկայացրել ԵԱՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող տրանսպորտային միջոցների հաշվառման եւ էլեկտրոնային անձնագիր ստանալու համար անհրաժեշտ գործողությունները:

ԼՈՒՐԵՐ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԼԱՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Հայաստանում մշակող արդյունաբերությունը 2022 թվականին աճել է, ՀՆԱ-ի կառուցվածքում այն կազմել է շուրջ 12 տոկոս. այս մասին ասաց ՀՀ էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը ԱԺ-ում ««Արդյունաբերական քաղաքականության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» նախագծի քննարկման շրջանակում:

«2022 թվականին Հայաստանում մշակող արդյունաբերությունն էապես աճել է, եւ թողարկման ծավալը 13.5 տոկոսով ավելացել է՝ կազմելով 1.8 տրլն դրամ. փոխարենը մի փոքր նվազել է հանքարդյունաբերությունը»,-ասաց Քերոբյանը:

Նախարարի վստահեցմամբ՝ դա կառավարության՝ տրամաբանորեն գծված պլանների շրջանակներում է, քանի որ կառավարության միջոցառումների ծրագրով նախանշվել է էապես ավելացնել մշակող արդյունաբերության դերը համախառն ներքին արդյունքում՝ թիրախը սահմանվելով 15 տոկոս: «Այժմ գտնվում է 12 տոկոսի միջակայքում: Կարծում եմ, որ այսպիսի էական աճը լավ քայլ է մեր նպատակին հասնելու ճանապարհին»,- եզրափակեց նախարարը:

ԽՈՂՈՎԱԿՆԵՐ Է ԳՈՂԱՑԵԼ

Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանում ընթանում է Էդուարդ Բոյախչյանի դատավարությունը: Նրան մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ հանդիսանալով ՀՀ ՊՆ Ն զորամասի պայմանագրային զինծառայող՝ 2022թ. հուլիսի 22-ին Տավուշի մարզի Իջեւան համայնքի Սեւքար բնակավայրի Գլի հանք կոչվող տարածքից ուրիշի գույքը՝ Տավուշի մարզի Իջեւան համայնքին պատկանող ընդհանուր 125 հազար ՀՀ դրամ արժողությամբ թվով 10 հատ ցինկե խողովակները գաղտնի հափշտակելու նպատակով «ԳԱԶ 66» մակնիշի ավտոմեքենայով իր տան բակ տեղափոխելու ժամանակ հայտնաբերվել է եւ ՀՀ ոստիկանության Իջեւանի բաժնի աշխատակիցների կողմից, գողություն կատարելու կասկածանքով, տեղափոխվել ոստիկանության բաժին: Է. Բոյախչյանին մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 44-254 հոդվածի 1-ին մասով: Սույն քրեական գործով մեղադրանքը պաշտպանում է Լոռու կայազորի զինվորական դատախազությունը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՄԻՍԸ ԹԱՆԿԱՑԵԼ Է

Հայաստանում գառան եւ տավարի միսը թանկացել է: Այս մասին տեղեկանում ենք ՀՀ վիճակագրական կոմիտեից: Գառան եւ տավարի մսի գինը բարձրացել է ոչ միայն այս տարվա հունվարին՝ նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ, այլ 2022 թվականի հունվարի հետ համեմատ: ArmLur.am-ը տեղեկացավ, որ այս տարվա հունվարին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ, գառան մսի գինը բարձրացել է 6.3, իսկ տավարի մսինը՝ 25 տոկոսով: 2022 թվականի դեկտեմբերի համեմատ՝ գառան մսի շուկայում արձանագրվել է 0.3, իսկ տավարի մսի շուկայում՝ 1.4 տոկոս գնաճ: Խոզի միսն ու թռչնամիսն են էժանացել: Ըստ Վիճակագրական կոմիտեի՝ խոզի միսը մեկ ամսվա ընթացքում էժանացել է 0.6, իսկ թռչնամիսը՝ 0.2 տոկոսով:

ՍՅՈՒՆԷ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 13 ՃՏՊ. 21 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

«ԱԿԲԱ» ԲԱՆԿ

ՖՐԱՆՍԵՐԵՆԸ՝ ՆՈՐ ԴԱՍԱՍԵՆՅԱԿՈՒՄ

Գորիսի Յուրի Բախշյանի անվան 3-րդ հիմնական դպրոցում երեխաներն արդեն ունեն սիրելի նոր անկյուն. նրանց համար ֆրանսերենի ուսուցման նոր դասասենյակ է բացվել: Դասասենյակը հագեցած է մուլտիմեդիա բոլոր հնարավորություններով, կրթական նյութերը եւ գրականությունը բերվել են Ֆրանսիայից ինտերակտիվ ու արդյունավետ դասեր կազմակերպելու նպատակով: Դպրոցի ֆրանսերենի դասասենյակը կահավորել եւ տեխնիկապես վերազինել է «Ստեփան Գիշյան» բարեգործական հիմնադրամը Կայուն զարգացման հայկական հիմնադրամի հետ:

«Կա ամեն բան, որ հնարավորինս բազմակողմանի ու արդյունավետ կազմակերպվեն ֆրանսերենի դասերը: Մենք գիտենք, որ օտար լեզվի իմացությունը նոր պատուհան է բացում անհատի առջեւ, փորձում ենք խթան հանդիսանալ, որ երեխաները հեշտությամբ հաղթահարեն լեզվի դժվարությունները, յուրացնեն ու հաճույքով հաճախեն դասերին»,- նշել է «Ստեփան Գիշյան» բարեգործական հիմնադրամի տնօրեն Աննա Գիշյանը: «Արդեն մի քանի տարի է, ինչ համագործակցում ենք «Ստեփան Գիշյան» բարեգործական հիմնադրամի հետ: Միասին ստեղծել ենք ֆրանսերենի 7 դասասենյակ: Ամեն անգամ դպրոցներ այցելելիս հաճելիորեն զարմանում ենք՝ տեսնելով կատարված աշխատանքը: Ցանկանում ենք, որ ֆրանսերենն արժեւորող եւ ֆրանկոֆոնիայի տարածմանն ուղղված այս ծրագիրը շարունակական լինի»,- նշել է Կայուն զարգացման հայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Ալեն Տուհադյանը:

«Որոշում կայացրինք բացել ֆրանսերենի դասասենյակ, որը կօժանդակի երեխաներին ֆրանսերենն ավելի լավ տիրապետելու համար: Դասասենյակի կահավորման խնդիր ունեինք, դիմեցինք «Ստեփան Գիշյան» բարեգործական հիմնադրամին, դրական պատասխան ստացանք, եւ դասասենյակը կահավորվեց»,- նշել է դպրոցի տնօրեն Դավիթ Կոստանդյանը:

Յուրի Բախշյանի անվան դպրոցը «Ստեփան Գիշյան» բարեգործական հիմնադրամի 2022 թվականի հաղթող դրամաշնորհային նախագծերից մեկն է:

«Ստեփան Գիշյան» բարեգործական հիմնադրամը մեկնարկել է 2023 թվականի դրամաշնորհային հայտերի ընդունումը: Օնլայն դիմում հայտերի ընդունման գործընթացը կտեւի մինչեւ ս.թ. մարտի 15-ը ներառյալ:

«Ստեփան Գիշյան» բարեգործական հիմնադրամը ստեղծվել է «Ակբա» բանկի, ֆրանսիական «Կրեդիտ Ագրիկոլ», «Կրեդիտ Ագրիկոլ Ազգային Ֆեդերացիա»-ի եւ Գիշյան ընտանիքի կողմից: Հիմնադրամի ծրագրերը ուղղված են հայ-ֆրանսիական կապերի ամրապնդմանը, Հայաստանի սոցիալ-տնտեսական, գիտակրթական, մշակութային, առողջապահական համակարգերի բարելավմանն ու կատարելագործմանը:

«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ» ԲԱՆԿ

20%-Ը ԿԵՆՍԱԹՈՇԱԿ ՍՏԱՆՈՒՄ ԵՆ ՔԱՐՏՈՎ

«ՎՏԲ-Հայաստան» բանկը նախորդ տարվա արդյունքներով ավելացրել է բանկի քարտերով կենսաթոշակ ստացող հաճախորդների թիվը մինչեւ 110 հազ. մարդ: Հաճախորդների այս խմբի՝ քարտերով իրականացված անկանխիկ գործարքների ծավալը նախորդ տարվա երկրորդ կիսամյակում հասել է 3,2 մլրդ դրամի՝ ավելի քան 8 անգամ գերազանցելով առաջին կիսամյակի արդյունքը:

«ՎՏԲ-Հայաստան» բանկի քարտերով կենսաթոշակ ստանալու համար հաճախորդին անհրաժեշտ է ներկայացնել դիմում Միասնական սոցիալական ծառայության ամենամոտ տարածքային ստորաբաժանում՝ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ եւ հանրային ծառայության համարանիշ: Այնուհետեւ բանկը բացում է հաճախորդի անունով քարտային հաշիվ, եւ արդեն հաջորդ ամսվանից կենսաթոշակը փոխանցվում է հաճախորդի քարտին: Քարտի տարեկան սպասարկումն անվճար է, «ՎՏԲ-Հայաստան» բանկի բանկոմատներից միջոցների կանխիկացման համար միջնորդավճար չի գանձվում: Բացի այդ, Կենսաթոշակի եւ նպաստի 10% հետվճարի պետական ծրագրի շրջանակում «ՎՏԲ-Հայաստան» բանկի հաճախորդները կարող են ամսական ստանալ ապրանքների եւ ծառայությունների դիմաց անկանխիկ եղանակով կատարված վճարումների գումարի 10%-ը (բայց ոչ ավելի, քան 5000 ՀՀ դրամ): 2022թ. երկրորդ կիսամյակում նման վճարումների ծավալը գերազանցել է 250 մլն ՀՀ դրամը: «ՎՏԲ-Հայաստան» բանկը հայաստանյան շուկայի առաջատարներից է կենսաթոշակային վճարումներով: Այսօր հաճախորդների գրեթե մեկ չորրորդն ընտրում է մեր բանկը կենսաթոշակ ստանալու համար: Միեւնույն ժամանակ, անցյալ տարի նկատվել է կենսաթոշակային քարտերով գործարքների բարձր ակտիվություն. երկրորդ կիսամյակում բնակիչները կատարել են 3,2 մլրդ ՀՀ դրամի ավելի քան 800 հազար անկանխիկ վճարումներ, ինչն 8 անգամ գերազանցել է առաջին կիսամյակի արդյունքները: Աճի խթան հանդիսացավ Կենսաթոշակի եւ նպաստի հետվճարային պետական ծրագիրը, որի շրջանակներում մենք որոշեցինք երկարաձգել բանկի մասնակցությունը մինչեւ հուլիս ամիս: Ծրագրի շրջանակում կենսաթոշակառուները կարող են ստանալ ամսական 10% հետվճար ապրանքների եւ ծառայությունների դիմաց անկանխիկ եղանակով վճարված գումարից» ,- նշել է «ՎՏԲ-Հայաստան» բանկի գլխավոր տնօրենի - տնօրինության նախագահի տեղակալի ժ/պ Տարաս Կլադչենկոն: «ՎՏԲ-Հայաստան» բանկն առաջարկում է կենսաթոշակային տարիքի հաճախորդներին ձեւակերպել «Սոցիալական» ավանդատեսակը: Նվազագույն գումարը կազմում է 10 հազ. ՀՀ դրամ, ժամկետը՝ 61-ից 365 օր: Ավանդի տոկոսադրույքը կազմում է տարեկան 5.25% - 8.1%, տարեկան եկամտաբերությունը՝ 5.28% - 8.08%: Ավանդը նախատեսում է միջոցների համալրման եւ ելքագրման հնարավորություն՝ մինչեւ նվազագույն մնացորդը: Ավանդի տոկոսները վճարվում են ամսական կամ ժամկետի վերջում: «ՎՏԲ-Հայաստան» Բանկի կենսաթոշակային քարտերի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն կարելի է ստանալ պաշտոնական կայքում, այցելելով բանկի մասնաճյուղեր կամ զանգահարելով Կոնտակտային կենտրոն 87-87 հեռախոսահամարով:

Բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ»

ԱՌԱՋԻՆԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

«Ամերիաբանկ»-ի MyAmeria բջջային հավելվածում ավելացել է նոր գործառույթ՝ VisaCardSubscription, որն իր տեսակի մեջ առաջինն ու միակն է Հայաստանում: Այն հնարավորություն է տալիս MyAmeria օգտատերերին տեսնել այն արտասահմանյան հարթակները, որտեղ վերջին 13 ամսում որպես վճարման միջոց կցել են իրենց Visa քարտը:

Նշենք նաեւ, որ MyAmeria-ի միջոցով հնարավոր է ցանկացած պահի դադարեցնել բաժանորդագրությունը կամ խմբագրել դադարեցման ժամանակահատվածը՝ 1 ամիս, 3 ամիս, 6 ամիս, մինչեւ գործողության ավարտը կամ պարզապես սահմանելով օրը:

Ի դեպ, վճարումները կարելի է մեկ հպումով ցանկացած պահի վերաակտիվացնել:

Առայժմ գործառույթը հասանելի է միայն «Ամերիաբանկ»-ի Visa քարտերի համար (այդ թվում՝ VisaDigital):

Հիշեցնենք, որ «Ամերիաբանկ»-ի նոր՝ MyAmeria բջջային հավելվածը թողարկվել է 2022 թվականին եւ նախատեսված է ֆիզիկական անձ հաճախորդների համար: Այն ունի մի շարք առավելություններ, նոր ու հարմարավետ դիզայն, չկրկնվող ու անընդհատ թարմացվող ֆունկցիաներ:

Նախորդ տարի «Ամերիաբանկ»-ն իր հաճախորդներին մատուցեց անակնկալ՝ MyAmeria-ի օգտատերերի շրջանում խաղարկելով 18 ուղեւորություն դեպի Կատար՝ մասնակցելու ֆուտբոլի աշխարհի առաջնությանը: Այս տարի ամփոփվեց եւս մեկ խաղարկություն, որն անցկացվում էր Visa-ի հետ համատեղ, իսկ մրցանակը Volkswagen ID.4 էլեկտրամեքենա էր:

«Ամերիաբանկ» ՓԲԸ

«Ամերիաբանկ» ՓԲԸ-ն առաջատար ֆինանսական - տեխնոլոգիական հաստատություն է եւ ՀՀ տնտեսական ոլորտի առավել նշանակալի դերակատարներից մեկը, որի ակտիվները գերազանցում են 1 տրիլիոն ՀՀ դրամը: «Ամերիաբանկ»-ը ներկայանում է նորարար ու թվային միջավայրով՝ էկոհամակարգով, որը մեկտեղում է ֆինանսական եւ ոչ ֆինանսական ծառայությունները եւ հնարավորություն ընձեռում բոլոր հիմնական ուղղություններով ստանալ հարմարավետ եւ հնարավորինս արագ ֆինանսավորում: Հաշվի բացումից մինչեւ քարտի տրամադրման եւ ֆինանսավորման համար դիմելու ամբողջ ուղին այժմ հնարավոր է անցնել էկոհամարգի առցանց միջավայրում:

«Ամերիաբանկ»-ն առաջնորդվում է հաճախորդամետ եւ բիզնեսի պատասխանատու վարման քաղաքականությամբ՝ թվային, ժամանակակից ու անվտանգ միջավայրում ապահովելով սպասարկման բարձր որակ:

Բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՀԵՂԻՆԱԿ

ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ՝ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հայաստանի գրողների միության նախագահության ամենամյա մրցանակաբաշխությանը մրցանակներ հանձնվեցին այն հեղինակներին, որոնք հետաքրքիր եւ արժեքավոր գրքեր են հրատարակել 2022 թվականին:

Մրցանակաբաշխությունը տեղի ունեցավ փետրվարի 9-ին ՀԳՄ դահլիճում:

«Համահայկական գրական հիմնադրամը Հայոց բանակին նվիրված ստեղծագործությունների համար այս տարի մրցանակների շարքն ընդլայնել է: Մեր խնդիրը ժամանակակից գրականության հանրահռչակումն է: Այս տարի ստեղծել ենք ասմունքի թատրոն, որը պետք է հանրահռչակի ժամանակակից գրողներին»,- նշեց Գրողների միության նախագահ Էդվարդ Միլիտոնյանն ու հավելեց, որ գրողների միությունը որոշել է 2023 թվականը գրականության տարի հայտարարել:

Նրա խոսքով՝ մրցանակաբաշխությունը անցկացվում է ավելի քան տասը տարի: Միլիտոնյանն ասաց, որ դեռ Խորհրդային Միության տարիներին նմանատիպ մրցանակաբաշխություններ հաճախ են կազմակերպվել:

«Այս արարողությունը նախ գրողի համար է լավ, որ նա մրցանակի է արժանանում, քանի որ դա նրան ոգեւորում է, իսկ ընթերցողի համար լավ է, որովհետեւ նա ճանաչում է այսօրվա ստեղծագործողներին»,- շեշտեց Միլիտոնյանը:

Դերենիկ Դեմիրճյանի անվան մրցանակի (արձակ) արժանացավ Վրեժ Սարուխանյանը՝ «Ագռավաքար» գրքի համար:

Ավետիք Իսահակյանի անվան մրցանակը (պոեզիա) տրվեց Հակոբ Հարությունյանին՝ «Ջինավառ ընձյուղ» գրքի համար:

Միքայել Նալբանդյանի անվան մրցանակը (հրապարակագրություն) շնորհվեց Վահան Սաղաթելյանին՝ «Երկու դարի արանքում» գրքի համար:

Հովհաննես Մասեհյանի անվան մրցանակը (թարգմանական գրականություն) ստացան Գուրգեն Խանջյանը՝ Վլ. Օդսեւսկու «Կենդանի մեռյալը» գրքի համար, եւ Գագիկ Դավթյանը՝ «Ալ. Բլոկ» եւ «101 բանաստեղծ» գրքերի թարգմանությունների համար:

Նիկոլ Աղբալյանի անվան մրցանակներ հանձնվեց Արա Առաքելյանին՝ «Համեմատական գրականագիտության հիմունքներ» գրքի համար, եւ Սեյրան Գրիգորյանին՝ «Վահագն Դավթյանի պոեմները» գրքի համար:

Վախթանգ Անանյանի անվան մրցանակը (մանկապատանեկան գրականություն) շնորհվեց Գոհար Գալստյանին՝ «Գունդուչիկն ու հայելին» գրքի համար:

Սեւանի ստեղծագործական տան մրցանակներին արժանացան Անուշ Վարդանյանը՝ «Սիրո լռություն» գրքի, իսկ Գայանե Փայտյանը՝ «Ասպրամ» գրքի համար:

Ծաղկաձորի ստեղծագործական տան Ե. Չարենցի անվան մրցանակները տրվեցին Անահիտ Թարյանին՝ «Մատյան Սիրո» վեպի համար, Դավիթ Գասպարյանին՝ «Եղիշեր Չարենցի կյանքը եւ ժամանակը» գրքի համար, եւ Արտեմ Հարությունյանին՝ «Հայոց հողի ծածկագիր տեսիլքներ» գրքի համար:

Թումանյանի անվան մրցանակը տրվեց Արեւշատ Ավագյանին՝ «Իմաստասիրական մտորումներ» գրքի համար:

Վազգեն Սարգսյանի անվան ԵԿՄ մրցանակը ստացավ Ռոլանդ Շառոյանը՝ պատերազմի թեմայով գրվածքների համար:

Համահայկական գրական հիմնադրամի մրցանակները տրվեցին Գագիկ Սարոյանին՝ բանաստեղծությունների համար, Հրանուշին՝ «Լույս ամենաներ» 2-րդ գրքի, Հռիփսիմէին՝ «44 օր» գրքի, Հովիկ Վարդումյանին՝ «Ջինվորները ծնվում են մարտադաշտում» գրքի, Ժաննա Հակոբյանին՝ «Հայրենիքը փշրված հայելի» գրքի, Դավիթ Միքայելյանին՝ «Հայացք ձմեռնամուտի» գրքի (Արցախ), Ռոբերտ Եսայանին՝ «Հրեշտակի ինքնագիրը» գրքի համար (Արցախ):

Հատուկ մրցանակների արժանացան Տիգրան Նիկողոսյանը՝ «Բառ ու խոսքի տոնահանդես» եւ «Ինչի համար է ապրում մարդը» մանկական գրքերի համար, եւ Լեւոն Բլբուլյանը՝ «Խոսք ու զրույց» հրապարակագրական գրքի համար:

ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԿԿԱՅԱՆԱ «ԱՎՐՈՐԱՅԻ ԼՈՒՍԱԲԱՑԸ» ՖԻԼՄԻ ՊՐԵՄԻԵՐԱՆ

Բրյուսելի միջազգային անիմացիոն կինոփառատոնի շրջանակում փետրվարի 19-ին տեղի կունենա Իննա Սահակյանի «Ավրորայի լուսաբացը» վավերագրական-անիմացիոն ֆիլմի պրեմիերան: Այս մասին տեղեկացնում է Հայաստանի ազգային կինոկենտրոնը:

«Ավրորայի լուսաբացը» հայգերմանալիտվական համատեղ արտադրության ֆիլմ է (արտադրող ընկերություններ՝ «Բարս մեդիա», Gebrueder Beetz Filmproduktion, Artbox Laisvalaikio Klubas): Ռեժիսորն ու սցենարիստն Իննա Սահակյանն է, պրոդյուսերներն են Վարդան Հովհաննիսյանը, Քրիստիան Բիցը, Յուստե Միխայլինայտեն: Ֆիլմը ստեղծվել է «Զորյան» ինստիտուտի գիտական աջակցությամբ եւ Հայոց ցեղասպանության բանավոր պատմության արխիվի հիման վրա: (Ֆիլմը ստացել է պետական ֆինանսական աջակցություն):

Ֆիլմը ներկայացնում է Ավրորա Մարդիգանյանի՝ Հայոց ցեղասպանությունը վերապրելուց մինչեւ հոլիվուդյան աստղ դառնալու ոդիսականը:

Հոլիվուդյան համր ֆիլմում վերամարմնավորելով ինքն իրեն՝դեռատի աղջիկը կրկին վերապրում է ցեղասպանության սարսափները՝նպատակ ունենալով աշխարհին պատմել հայկական Եղեռնի մասին:

ԼՈՒՐԵՐ

ԿԻՐԿՈՐՈՎԸ ՀՈՍՊԻՏԱԼԱՑՎԵԼ Է

Երգիչ Ֆիլիպ Կիրկորովի հայրը՝ Բեդրոս Կիրկորովը, հոսպիտալացվել է: «Ռիա Նովոստի»-ն հայտնում է, որ տեղեկությունը փոխանցել է նրա որդու՝ Ֆիլիպ Կիրկորովի ներկայացուցիչ Եկատերինա Ուսպենսկայան: «Նա հոսպիտալացվել է, բայց վիճակը ծանր չէ, բժիշկներն այժմ ուսումնասիրում են վիճակը»,- ասել է Ուսպենսկայան: Ավելի վաղ ՁԼՄ-ներում տեղեկություններ էին հայտնվել, որ Կիրկորով ավագի համար շտապօգնություն են կանչել: Արտիստի բուժքույրը բժիշկներ է կանչել, քանի որ Կիրկորովը դժվարացել է շնչել, եւ արյան ճնշումն իջել է:

ՄԵԿՆԱԲԱՆԵԼ Է ԽԱՂԸ

«Ալ Նասրի» 58-ամյա ֆրանսիացի գլխավոր մարզիչ Ռուդի Գարսիան մեկնաբանել է 38-ամյա հարձակվող Կրիշտիանու Ռոնալդուի մրցելույթը Սաուդյան Արաբիայի առաջնության 16-րդ տուրում «Ալ Վեհդայի» դեմ խաղում (4:0): 4 գոլն էլ խփեց պորտուգալացի ֆուտբոլիստը: «Ռոնալդուն հասավ փոխըմբռնման եւ ներդաշնակության թիմակիցների հետ: Ժամանակ էր պետք, որպեսզի ֆուտբոլիստները հասկանային, թե ինչ է անհրաժեշտ Ռոնալդուին արդյունավետության համար: Հրաշալի երեկո էր Կրիշտիանուի համար»,- ասել է Ռուդի Գարսիան: Ռոնալդուն ազգային լիգաների մակարդակում խփել է 503 գոլ, ինչը ռեկորդային ցուցանիշ է ֆուտբոլի պատմության մեջ: «Ալ Նասրը» 37 միավորով գլխավորեց մրցաշարային աղյուսակը: Նույնքան միավոր ունի երկրորդ տեղում գտնվող «Ալ Շաբաբը»: «Ալ Վեհդան» 13-րդ է՝ 15 միավոր:

ՌԵԿՈՐԴԱՅԻՆ ԳԻՆ

«Լոս Անջելես Լեյքերսի» լեգենդար ամերիկացի բասկետբոլիստ Կոբե Բրայանտի ինքնագրով խաղաշապիկը վաճառվել է Sotheby's աճուրդում 5,85 միլիոն դոլարով: Սա ռեկորդային գին է Բրայանտի հետ կապված իրերի համար: Կոբե Բրայանտն այդ խաղաշապիկով է եղել 2008թ. մայիսի 7-ին Բասկետբոլի ազգային ասոցիացիայի մրցաշրջանի ամենաարժեքավոր խաղացողի (MVP) մրցանակը ստանալիս: 2007-2008 թվականների մրցաշրջանում անցկացրած 82 հանդիպումներից 25-ում Բրայանտը խաղահրապարակ է դուրս եկել նույն խաղաշապիկով: Երեք տարի առաջ Բրայանտի ողբերգական մահից հետո տարբեր երկրներում արված որմնանկարներում բասկետբոլիստը պատկերված է հենց այդ խաղաշապիկով:

Ո՞ՒՐ Է ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻՆ

Դերասանուհի Արփինե Իսրայելյանը, որը հանրության շրջանում առավել հայտնի դարձավ «Որբեր» հեռուստասերիալից, վերջին շրջանում հեռուստաէկրաններին չի երեւում: Դերասանուհու վերջին հեռուստանախագիծը եղել է «Կարմիր բլուր» սերիալը: Ինչպես նկատում ենք, դերասանուհին այս պահին հեռուստանախագծերում զբաղվածություն չունի, բայց բավականին ակտիվ է «Ինստագրամ»-ի իր էջում: Արփինեն հաճախ վիդեո ռոլիկներ է տեղադրում որդու մասնակցությամբ:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

● *Փետրվարի 11-ին Երեւանի պատանի հանդիսատեսի թատրոնում տեղի կունենա «Բրեմենյան երաժիշտները» մանկապատանեկան ներկայացումը: Տոմսերի արժեքը՝1000-3000 դրամ: Սկիզբը՝ժամը 15:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Տանը ղանիր եւ այլ սննդամթերք եմ ղատրաստում: Ո՞ւմ դիմել վաճառելու թույլտվության համար:

Հասմիկ Պապիկյան (38 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Նախ անհրաժեշտ է, որ ունենաք նման գործունեություն ծավալելու համար իրավաբանական ձեւակերպում, այսինքն՝ հաշվառվեք որպես Ա/Ձ կամ հիմնադրեք ՍՊԸ: Ա/Ձ հաշվառվելու համար բավարար է միայն անձնագրով մոտենալ իրավաբանական անձանց պետական ռեգիստր եւ տեղում կատարել 3000 դրամ վճարում: Իրավաբանական ձեւակերպում ստանալուց հետո անհրաժեշտ է նախ որոշել տեսականին, թե ինչ տեսակի պանիրներ կամ այլ սննդամթերք եք պատրաստելու: Տեսականին որոշելուց հետո անհրաժեշտ է յուրաքանչյուր տեսակից մեկական նմուշ ներկայացնել ՀՀ սննդի անվտանգության պետական տեսչություն, որպեսզի դրանք անցնեն համապատասխան ստուգում, որից հետո Ձեզ կտրամադրվի համապա-տասխան ստուգման հավաստագիր՝ յուրաքանչյուր տեսակի համար: Ստուգման կենթարկվեն ինչպես Ձեր կողմից սննդամթերքը պատրաստելու եղանակները եւ պայմանները, այնպես էլ Ձեր կողմից պատրաստվող սննդամթերքի որակն ու անվտանգությունն առողջության համար:

ՀՀ սննդի անվտանգության տեսչություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հարկ է նաեւ նշել, որ ՀՀ կառավարությունը սահմանել է կաթնամթերքի արտադրության համար նվազագույն պահանջներ, որոնց պետք է համապատասխանի արտադրությունն ու պատրաստվող սննդամթերքը, եւ ՀՀ սննդի անվտանգության պետական տեսչությունը հենց այդ պահանջներով է առաջնորդվում ստուգում իրականացնելիս: Խորհուրդ է տրվում, որ մինչեւ ստուգման դիմելը ծանոթանաք սահմանված պահանջներին եւ դրանց համապատասխանեցնել Ձեր արտադրությունը:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Էլիտար շենքի բնակիչները կայանատեղիի արգելափակոցը բացելու համար ազդանշաններ են տալիս ու խանգարում անդորրս. ի՞նչ անել եւ ո՞ւմ դիմել:

Ռոբերտ Սաֆարյան (32 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Նման իրավիճակում, եթե վարորդները ձայնային ազդանշանները տալիս են գիշերային ժամերին՝ 23:00-ից հետո մինչեւ 07:00-ն, եւ դա հանգեցնում է քաղա-քացիների անդորրի խանգարման, սահմանված է վարչական պատասխանատվություն: Գիշերային ժամանակ (ժամը 23:00-ից մինչեւ 7:00-ն, բացա-ռությամբ այն դեպքերի, երբ լռությունը խախտվում է հասարակական օբյեկտների աշխատողների կողմից) լռությունը խախտելը, այսինքն՝ բարձրաձայն երգելը կամ երաժշտական գործիքներ նվագելը կամ ձայնային ազդանշաններ տալը կամ բարձր միացրած հեռուստացույցից, ռադիոընդունիչից, մագնիտո-ֆոնից կամ այլ սարքերից օգտվելը բնակելի շենքերի բնակարաններում կամ մուտքերում կամ բնակելի տարածություններում կամ բակերում կամ փողոցներում կամ այլ հասարակական վայրերում կամ դրանցից դուրս աղմուկով ուղեկցվող աշխատանքներ կատարելը, որոնք կապված չեն անհետաձգելի անհրա-ժեշտության հետ, ինչպես նաեւ այլ գործողությունները, որոնք խախտում են գիշերային անդորրը, առաջացնում են նախազգուշացում: Նախազգուշացման կիրառումից հետո նույն անձի կողմից գիշերային անդորրը մեկ տարվա ընթացքում կրկին խախտելու դեպքում տվյալ անձը ենթակա է վարչական պատասխանատվության՝ 40.000 դրամի չափով:

ՀՀ Ոստիկանություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Համաձայն ճանապարհային երթեւեկության կանոնների 136 կետի՝ ձայնային ազդանշանները կարող են կիրառվել միայն.

-բնակավայրերից դուրս վազանց կատարելու մտադրության մասին մյուս վարորդներին նախազգուշացնելու համար,

-այն դեպքերում, երբ դա անհրաժեշտ է ճանապարհատրանսպորտային պատահարը կանխելու համար:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Արցախի կառավարությունը, ի աջակցություն Սիրիայում երկրաշարժից տուժած հայ համայնքի, դրամահավաք է կազմակերպում: Այս մասին տեղեկանում ենք Արցախի տեղեկատվական շտաբի տարածած հայտարարությունից: «Միայն մեր համազգային ամուր միասնականությամբ ու միմյանց սատար կանգնելու անկեղծ ցանքերով է հնարավոր հաղթահարել ինչպես բնության արհավիրքները, այնպես էլ արհեստածին մարտահրավերները»,- նշված է հայտարարության մեջ: Ցանկացողները նվիրատվությունները ՀՀ դրամով կարող են կատարել «Արցախբանկ»-ում բացված հաշվեհամարին՝ 22300100156701:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **10.02.2023**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: